**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

04.12.2023թN 06/11.2/15945-2023

ՀՀ Կոտայքի մարզ,
Աբովյան համայնքի ղեկավար
պարոն Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԻՆ

2023 թվականի հոկտեմբերի 13-ի
N Ե-6379 գրություն

Հարգելի պարոն Բաբայան

Ձեզ ենք տրամադրում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող 07-002-0040-0046 կադաստրային ծածկագրով 0.3 հա մակերեսով հողամասը, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալի ուղղման և ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն, ամփոփ տեղեկանքն ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պայմանը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է վերը նշված փոփոխությունն ընդգրկել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակվող ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Աբովյան քաղաքի նախագծում:

Առդիր՝ 3 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՄԱՐԶԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
Մուտքի թիվ Դ-2665
«05» 12 2023